

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՅԵԴԵ ՇՈՀՐԵ ՍԱԶՋԱԴԻ

ՀԱՄԱԴԱՆԻ ԵՎ ՖԱՐՍԻ ՖԱՀԼԱՎԻՅԱԹԸ

Ժ.02.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մ.Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Վ.Ս Բոյաջյան

**Առաջատար
կազմակերպություն՝** ԻԻՀ, Գիլան, Ռաշտի համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվ. փետրվարի 19-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ- ի՝ 019
Լեզվաբանության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015 ,
Գրիգոր Լուսավորչի 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքվել է 2018 թվ. հունվարի 15- ին

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Fahlaviyāt (արաբերեն *fahlaviyya* բառի հոգնակին է, որն էլ *pahlavi* (միջին պարսկերեն *pahlavīg*) ձևի արաբականացված տարբերակն է) եզրը կիրառվում է այն բարբառային բնագրային նմուշների բնորոշման համար, որոնք ստեղծվել են *Փահլե (Pahle)* տարածաշրջանի սահմաններում, որը, ըստ տարբեր հեղինակների, ներառում է Համադանը, Սպահանը, Ռեյը, Նահավանդը, Ատրպատականը, Դինավարը, Ղազվինը և այլն: Մենք ուսումնասիրել ենք Համադանի և Ֆարսի ֆահլավիյաթները՝ համեմատելով դրանք մնացած շրջաններից ծագած նմուշների հետ:

Բովանդակային առումով ֆահլավիյաթները բաժանվում են երկու մեծ խմբի՝ սիրային-լիրիկական ու խոհափիլիսոփայական:

Ատենախոսության շարադրման համար հիմք են հանդիսացել մինչ այժմ հրատարակված ֆահլավիյաթների բնագրային ամբողջ կորպուսը, ինչպես նաև թեմային վերաբերող՝ Ա. Սադեղիի, Մ. Ադիբ Թուսիի, Ն. Ամադիի, Բաբա Թահերի, Ի. Քալբասիի, Բ. Նաջինի Ֆինիի, Բ. Ղարիբի, Ս. Ա. Միր Աֆգալիի, Մ. Նավաբիի, Մ. Ռոսթամիի, Գ. Շոքրիի աշխատությունները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ներկայումս կուտակված հազվագյուտ ու արժեքավոր լեզվակնյութի՝ գիտական շրջանառության մեջ դնելու հրատապությամբ: Այդ նյութի հավուր պատշաճի քննությունը էական դեր կարող է ունենալ պարսկերենի պատմության, մասնավորապես, Ֆարսի ու Համադանի շրջանի պարսկական խոսվածքների ուսումնասիրության և, առհասարակ, նոր իրանական բարբառագիտության բազում հարցերի լուսաբանման համար:

Արենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է համակարգային ուսումնասիրության ենթարկել Համադանի և Ֆարսի շրջանների ֆահլավիյաթների քերականական համակարգը:

Այդ նպատակի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) բնագրային վերլուծության ենթարկել լեզվանմուշները.

բ) բազմակողմանիորեն քննել Համադանի և Ֆարսի ֆահլավիյաթների բառապաշարային, հնչյունական, ձևաբանական և շարահյուսական համակարգերը,

գ) համեմատել Իրանի տարբեր շրջանների և Համադանի ու Ֆարսի ֆահլավիյաթների քերականության համապատասխան ձևերը:

Արենախոսության գիտական նորոյթը

Աշխատանքում առաջին անգամ ուսումնասիրվել են Համադանի և Ֆարսի հին խոսվածքների ֆահլավիյաթների ամբողջ ձևաբանական, շարահյուսական և բառապաշարային համակարգերը:

Արենախոսության տեսական և գործնական նշանակությունը

Շիրազի և Համադանի ֆահլավիյաթները արտացոլում են պարսից լեզվի պատմության նոր փուլի (8-9-16-17րդ դդ.) ավելի ուշ շրջանը: Տեսական առումով աշխատանքը կարևոր է պարսից լեզվի պատմական զարգացման որոշարկման ուղղությամբ բերված նյութերի և եզրահանգումների տեսանկյունից: Ատենախոսության գործնական նշանակությունը ակնհայտ է. այն կարող է ծառայել պատմական պարսկերենի, պարսից և իրանական բարբառագիտության ձեռնարկ, իրանական համեմատական լեզվաբանության համար անհրաժեշտ գիտական տվյալների ու լեզվական փաստերի աղբյուր:

Արենախոսության մեթոդաբանական հիմքը

Աշխատանքը շարադրված է պատմահամեմատական լեզվաբանության մեթոդի և համաժամանակյա լեզվաբանական վերլուծության կիրառմամբ:

Արենախոսության փորձաքննությունը

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի կողմից: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի տպագրած հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երկու գլխից, եզրակացություններիցից և օգտագործված գրականության ցանկից:

Նախաբանը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ֆահլավիյաթի պատմությունն է, որը ներկայացնում է եզրույթի ծագումը, Փահլե շրջանի սահմանները, ֆահլավիյաթին առնչվող տարբեր եզրերի բացատրություններ, ֆահլավիյաթների բովանդակային բնութագիրը, տաղաչափության խնդիրները և այլն: Համադանի և Շիրազի ֆահլավիյաթներից գատ՝ տրված են նաև Արդաբիլի, Ջանջանի, Թավրիզի, Ռեյի, Ղազվինի ֆահլավիյաթների և տվյալ ժանրով ստեղծագործող պոետների մասին համառոտ տեղեկություններ: Նախաբանի երկրորդ մասում շարադրված է թեմայի ուսումնասիրության պատմությունը: Անդրադարձ է կատարվել Վ. Հենինգի, Ա. Թուսի, Մոլայիի, Դանեշ Փաժուի, Դաբիր-ե Սիյադիի, Էղթեդարիի, Մ. Ջ. Վաջեդի, Ջ. Մաթինիի, Ա. Թաֆազուլիի, Ա.Ա. Սադեդիի, Ղ. Ա. Արյայի, Մ. Նավվաբիի, Հ. Քազերունիի, Միր Աֆգալիի, Էսմայիլ-Փուրի, Ռ. Բաղբիդիի, Սալամիի, Յազդանփարասթի, Միրաբեդինիի, Մորադիի և այլ հեղինակների աշխատություններին:

Ատենախոսության ***առաջին գլուխը***՝ «Ֆարսի ֆահլավիյաթները», բաղկացած է տասը ենթագլուխներից:

Այսպեղ համապարփակ ուսումնասիրվել են Ֆարսի շրջանի բնագրային վկայությունները, որոնք թեմայի համար չափազանց մեծ արժեք են ներկայացնում: Այս առումով բացառիկ են հատկապես Շահ Դայի Շիրազիի kân-e malâhat աշխատության մեջ տեղ գտած բանաստեղծությունները: Մեծ կարևորություն ունեն

նաև Շամս Փոս-ե Նասերի դիվանը, Սուֆի Էսհաղ Էբրահիմ Իբն Շահրիյար Քազերունիի Քազերունի բարբառով գրված տեքստերը, Mosalasāt-e S'aadī աշխատությունը, Բեսհաղ Աթմեի դազալները, դասիդեներն ու դաթէները, Ալի Իբն ալ Հասսան Անսարիի «Extiyārāt-e badī'ī» աշխատությունը, Բորհան-է Ղաթե հայտնի բառարանը, «Tohfe-ye hakīm» աշխատությունը, «Neyriziyāt» վերնագրով ժողովածուն և այլն:

Առաջին գլխի առաջին ենթագլուխն իր հերթին բաղկացած է տասնմեկ մասերից: Համակողմանիորեն և մանրամասն ուսումնասիրվել է հիշյալ բնագրերի հնչյունական համակարգը՝ Շիրազի և Քազերունի բարբառներով գրված բանաստեղծությունների հիման վրա:

Երկրորդ ենթագլխում ներկայացված է Շիրազի հին բարբառների պատմական հնչյունաբանությունը: Համապարփակ քննության է առնվել ամբողջ հնչյունական համակարգի զարգացումը, օրինակ, պահլավական /w/ հնչյունը Շիրազի բարբառում վերածվում էր /b/-ի, ուստի ունենք պահլավերեն wārān, Շիրազի բարբառում barān «անձրև», պահլավերեն wāzār, Շիրազի բարբառում bazār «շուկա» ձևերը, իսկ /u/ հնչյունը արտացոլում է պահլավերենի /ō/ հնչյունը, օրինակ, պահլավերեն dōst, Շիրազի բարբառում dust «ընկեր» և այլն:

Երրորդ ենթագլխում ներկայացված է Շիրազի հին բարբառի գոյական խոսքի մասը: Առանձին քննության են առնվում.

ա) գոյականի թիվը

Շիրազի բարբառում գոյականն ունի եզակի և հոգնակի թիվ: Հոգնակի թվի կազմությանը մասնակցում են -ān (շնչավոր առարկաների համար) և -hā (անշունչ առարկաների համար) հոգնակիակերտ վերջավորությունները, օրինակ, har yek az ihā semoyē jāš bovet tā jay sayr xo ve tehnaš bovet «նրանցից յուրաքանչյուրի տեղը երկնքում է,

մինչ իր պտույտի տեղը, նա միայնակ այնտեղ կլինի»:

բ) անորոշության և որոշյալության քերականական կարգը

Գոյականի անորոշությունն արտահայտվում է վերջինիս -ī ավելացնելով, ինչպես նաև գոյականից առաջ ē կամ yak «մեկ» դնելով, օրինակ, az har šāqī ke bū vo tarīqike mom dadond yā rab jazoy xeyr-ešon az to havāle bā «այն լավության համար, որ տեսել եմ ուրիշներից, տե՛ր Աստված, դու նրանց լավության պարզևր տուր»: Իսկ որոշյալությունը արտահայտվում է in «այս» և ān «այդ» ցուցական դերանուններով, օրինակ, Ka xayr-et büt az in ma'ni ke-t ašnoft begoy rahmat va sa'dī bā ke-ši goft «Եթե այս խոսքերը լսելուց քեզ բարիք հասնի, սաս' ներում Սաադիին, որ այս խոսքերն սասց»:

գ) գոյականների կազմությունը

Շիրագի բարբառում գոյականներն ըստ կազմության կարող են լինել պարզ, օրինակ, *behešt* «դրախտ», *ածանցավոր*, օրինակ, *sīhavi* «սևություն», և բարդ, օրինակ, *golšekar* «շաքարապատված վարդի թերթիկներ»:

դ)գոյականի շարահյուսական գործառնությունները

Գոյականը նախադասության մեջ կարող է հանդել գալ որպես.

ենթակա, օրինակ, *alī mohheb-e xodā vo rasul-e oy oš har do hen moheb-e mowlā benī vela* «Ալին Աստծո սիրելին ու առաքյալն է, և նրանք երկուսն էլ տեր են, դու ընկերություն'նը տես»,

ստորոգյալ, օրինակ, *yonča sahar maya-š nake češ a soy-e to to-š nadī tefl-en-o xvaš del-en bešel yar va soy-e xo mexan-at* «առավոտվա բողբոջը մի՞թե քեզ չնայեց, քեզ չտեսավ, երեխա է, ուրախ է, թո՛ղ նրան, եթե իր համար է ծիծաղում»,

ուղիղ խնդիր, օրինակ, *zī roye har rū una šānē dāhen nesbateš az nāmo nešāne dāhen* «ամեն ակնհայտը նրա (Աստծո) արժանիքն են համարում, և անուն ու նշան են նրան վերագրում»,

լրացում, օրինակ, *bešavatem jān yarem deldār mišavet varem ru dī delom az kār mišavat*, «եթե հոգիս գնա, սիրտս կգնա, եթե նրա դեմքը տեսնեմ, սիրտս կաշխատի»:

Չորրորդ ենթազվխում շարադրված է Շիրագի հին խոսվածքի դերանուն խոսքի մասը: Համակողմանի ուսումնասիրվել են.

ա)անձնական դերանունները

եզակի թիվ- 1-ին դեմք *mo/mom/om/men/ma/mī* «ես», 2-րդ դեմք *to/tot/ot* «դու», 3-րդ դեմք *ša/šaš/oš/oy* «նա»,

հոգնակի թիվ-1-ին դեմք *amā* «մենք», 2-րդ դեմք *šemo* «դուք», 3-րդ դեմք *ošon/oyšān* «նրանք»:

կցական անձնական դերանունները

եզակի թիվ- 1-ին դեմք –*m*, 2-րդ դեմք –*t*, 3-րդ դեմք –*š*,

հոգնակի թիվ-1-ին դեմք –*mon*, 2-րդ դեմք –*ton*, 3-րդ դեմք –*šon*.

բ)ցուցական դերանունները

ī, e, en, ēm «այս», «սա» ցուցական դերանունները ցույց են տալիս մոտ գտնվող անձ կամ առարկա, իսկ *ā, o, on* «այդ», «դա», «այն»-ը հեռու գտնվող անձ կամ առարկա:

գ) հարաբերական դերանունները

Շիրագի հին բարբառի միակ հարաբերական դերանունը *ke-ն է՝ «որ»*:

դ) Շիրագի հին բարբառի որոշյալ, անորոշ, ժխտական դերանունները. *hama* «բոլորը», *har* «յուրաքանչյուրը», *hēz* «ոչինչ», *kes* «մեկը, ինչ-որ մեկը», *de* «ուրիշ»:

ե)Շիրագի հին խոսվածքի հարցական դերանունները. *če* «ի՞նչ», *ke* «ո՞վ» ը:

զ) *xo* «ինքը» փոխադարձ դերանունը օգտագործվում է կցական դերանունների հետ՝ *xot* «ինքդ», *xoš* «ինքը», *xom*«ինքս», *xo* ձևով հազվադեպ է հանդես գալիս:

Հինգերորդ ենթազվխում ներկայացված է ածական խոսքի մասը: Շիրազի բարբառում ածականը ձևավորում է իզաֆեթային կառույց՝ դրվելով որոշյալից հետո, օրինակ, *fereste 'atr ana hāvay falak mayar mēsāt keš edno az boy-e xvaš bād-e jānfezā amdast* «արդյո՞ք հրեշտակը երկնքում այնպիսի բույր է ստեղծում, որ երկնքից այդպիսի հաճելի հոտ է գալիս»:

Վեցերորդ ենթազվխում շարադրված է մակբայ խոսքի մասը: Շիրազի հին բարբառում առանձնացվում են.

ա) բուն մակբայները, օրինակ, *gōya* - «կարծես», *bas* - «շատ»:

բ) մակբայական բառերը, օրինակ, *sarvaxto* «ժամանակին», *har dam* «ամեն պահ», *ru* «օր», *parīr* «նիխորդ օրը», *dig* «երեկ», *sālhā* «տարիներ»:

Յոթերորդ ենթազվխում ներկայացված է բայ խոսքի մասը: Շիրազի հին խոսվածքում բային բնորոշ են դեմքի, թվի, կերպի, ժամանակի, եղանակի, բայասեռի քերականական կարգերը: Բայերը բաժանվում են դիմավոր և անդեմ ձևերի: Հստակորեն արտահայտված են անորոշ և անցյալի դերբայները: Կառուցվածքային տեսանկյունից Շիրազի հին բարբառում առանձնացվում են.

ա) պարզ բայեր, օրինակ, *goš a-thon dār ayat xāter naranzet ke θoxnī āqelī dah bār oθanzet* «այս խորհուրդը լսիր, եթե միտքդ չի տանջվում (համաձայն է դրա հետ), քանի որ իմաստունը խոսքը տասն անգամ կշռում է»:

բ) ածանցավոր բայեր, օրինակ, *ayar xodām rozē az gehon olāret sahl farāq-e yār ve qathā rozī amā makonā* «Եթե Աստված մի օր աշխարհից ինձ հեշտությամբ տանի, յարիս հետ բաժանումը չի լինի»:

գ) բարդ բայեր, օրինակ, *hezār bār le dā'īuaš be zenya kard o qatl na ešg hasten azīhā dezaš ċe miċuten* «հազար անգամ Դայիին սպանելով նրան կենդանացրեց, սիրո մեջ այսպիսի բաներ կան, ուրիշ էլի ի՞նչի կարիք կա» :

Պատճառական բայերը կազմվում են ներկայի հիմքին ավելացնելով –on, օրինակ, *bebḏazonet* «հալեցնում է»:

Օժանդակ բայերը Շիրազի հին բարբառում հետևյալն են.

եզակի թիվ 1-ին դեմք *hem* «եմ», 2-րդ դեմք *heste* «ես», 3-րդ դեմք *hen/he* «է»,

հոգնակի թիվ 1-ին դեմք *hīm* «ենք», 2-րդ դեմք *hiten* «եք», 3-րդ դեմք *hend* «են»:

Շիրազի հին բարբառում բայն ունի երկու հիմք՝ ներկայի և անցյալի, որոնց միջոցով էլ արտահայտվում է բայաձևերի ժամանակային հակադրությունը: Անցյալի հիմքը կազմվում է անորոշ դերբայից հանելով –a վերջավորությունը: Ըստ ներկա և անցյալ հիմքերի հարաբերակցության՝ բայերը լինում են կանոնավոր և անկանոն:

Բոլոր բայերը, ըստ ուղիղ խնդիր ընդունելու հատկության, բաժանվում են.

ա) անցողական բայերի, օրինակ, *bebāt ī dahr-e dohn-rā tir az ī post na ham šoy tir ana kmān bu ke-š oy košt* «նետը շարժվում է դեպի անարժեք աշխարհը, բայց քանի դեռ արժեղի հետ էր, աշխարհը նրան սպանեց»

բ) անանցողական բայերի, օրինակ, *zī roye har rū una šānē dahon nesbateš oz nāmo mešāne dahon* «ամեն ակնհայտը նրա (Աստծո) արժանիքն են համարում և անուն ու նշան են նրան վերագրում»:

Էրգատիվ կառուցը արտահայտում է բայերի անցողականությունը և անանցողականությունը, օրինակ, *na ke-t tafsīr-o feq xvānd eštē a behešt bas-em dī k-asvorī mānd payda bebdešt* «եթե ֆիկհին ես հետևում, արդյո՞ք դրախտ կգնաս, շատ եմ տեսել հեծյալներ, որ մնացել են, իսկ հետիոտներն անցել են»:

Կիրառվում են բայի հետևյալ եղանակները.

ա) *սահմանական եղանակը*, որն ունի հինգ ժամանակածև.

Ներկա ժամանակը կազմվում է *mē* նախամասնիկով, ներկայի հիմքով և դիմային վերջավորություններով, օրինակ, *mīxohem(en)* «ուզում եմ», *mohohont(on)* «ուզում են» և այլն:

Ներկա վաղակարար ժամանակածևը կազմվում է անցյալի դերբայով և բայի դիմային վերջավորություններով, օրինակ, *kardeam* «արել եմ», *kardit* «արել եք» և այլն:

Անցյալ կարարյալը կազմվում է անցյալի հիմքի և դիմային վերջավորությունների միջոցով, օրինակ, *ostondē* «գրավեցիր», *ostondim* «գրավեցինք»:

Անցյալ շարունակականը կազմվում է *mē* նախամասնակով, անցյալի հիմքով և անցյալ ժամանակի դիմային վերջավորություններով, օրինակ, *mī-govtem* «ասել էի», *mī-govtont* «ասել էիք»:

Ապառնի ժամանակածևի կազմությանը մասնակցում են *kamīstan* (*kāmeistan*)՝ «ցանկանալ» օժանդակ բայի խոնարհվող ձևերը և անորոշ դերբայը կամ անցյալի հիմքը, օրինակ, *mayar ke-m fa-buvađ bekamē dađin/dađē* «մի՞թե ինձ քամուն կտաս»:

բ) *Պայմանական եղանակը*, որն ունի միայն մեկ ժամանակածև՝ *ներկա ապառնի*: Ներկա ապառնին կազմվում է *be* նախամասնիկով, ներկայի հիմքով, դիմային վերջավորություններով, օրինակ, *bisāyē* «հանգստանաս», *bisāyēn* «հանգստանաք»:

գ) *Ըղծական եղանակը*, որն ունի միայն *ըղծական ներկա* ժամանակածև: Այն կազմվում է ներկայի հիմքով, ըղծական ներկային բնորոշ դիմային վերջավորություններով և ունի հազվադեպ կիրառություն, օրինակ, *az har šrqī ke bī vo tariqī ke mom dadond yā rab jazoy xeyr-ešon az to havāle bā* «այն լավության համար, որ տեսել եմ ուրիշներից, տե՛ր Աստված, դու նրանց լավության պարգևը տուր»:

դ) *Հրամայական եղանակը*, որն ունի միայն երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թիվ: Երկրորդ դեմք եզակի թվի ձևերը համընկնում են ներկա ժամանակի հետ՝ *-be* (*bo*) նախամասնիկի հավելմամբ, որ երբեմն չի կիրառվում: Հոգնակի ձևը կազմվում

է ներկայի հիմքին ավելացնելով –be և բայի երկրորդ դեմքի հոգնակի ձևը կազմող –it վերջավորությունը: Օրինակ, begoy ke saqī bāqī ve bāng-e motreb-e 'ešq mey leqā' xom-e algaq sovu sovu ze xom ār «մատովակին հավիտենականությունը սիրո երգչի ծայնո՛վ պատմիր, Աստծո հանդես սերը կում-կում ի՛նձ տուր»:

Ութերորդ ենթագլխում անդրադարձ է կատարվել Շիրազի հին բարբառի ա) կապերին

a, asoy-«դեպի, կողմը», ana, toy-«մեջ, ներս», tey-«մոտ», men-«մեջտեղ», veze-«կողմը, դեպի», peš-«մոտ, կողքին», va-«դեպի» և այլն: Օրինակ, yaman-i vāmaboš ke-m az pey-e to ars-e češ čō aqīq-e tar mi-ševat «մի՛ հեռացիր Յեմենից, ինչպես չեմ հեռանում ես քեզանից, քանի որ աչքիցս ազաթե արցունք է հոսում»:

բ) շաղկապներին

ke-«որ», yā-«կամ», azīm-«այս պատճառով, հետևաբար», valī-«բայց», čō-«ինչպես, balke-«բայց», o-«և», օրինակ, balke yar ehsān talabē nīk bekon ve jay har bad ke benē az kasān «բայց եթե բարեգործություն ես ուզում, լավություն արա, ամեն վատի դիմաց, որ տեսնում ես մարդկանցից»:

Իններորդ ենթագլխում ներկայացված է թվական խոսքի մասը: Շիրազի հին բարբառին պատկանող գրավոր հուշարձաններում առկա չեն թվականի բոլոր ձևերը: Վկայված քանակական թվականներն են՝ yak «մեկ», do «երկու», se «երեք», čār «չորս», pa(o)nz «հինգ», šaš «վեց», haft «յոթ», hašt «ութ», no(h) «ինը», dah «տաս», panzāh «հիսուն», bi(a)st «քսան», čel «քառասուն», sad «հարյուր», hazār «հազար», haft-sad «յոթ հարյուր»։ Դասական թվականները կազմվում են՝ քանակական թվականների ավելացնելով –om վերջավորությունը, օրինակ, vojuben o qedam o dez hodusen o emkān sefāt-e pāk-e to avval o dovnom sefāt-e amā «պարտադիր և դարավոր է, և նոր ու հնարավոր, առաջինը (պարտադիր ու դարավոր) քո մաքուր բնույթն է, երկրորդը՝ (նոր և հնարավոր) իմը»:

Բաշխական թվականները կազմվում են bār մասնիկի ավելացմամբ կամ ուղղակի թվականների կրկնությամբ՝ միջադաս նախդիրով, օրինակ, bayān-e hāl o moqām-e dervešān šān hest az ī gedā mofassal o yekān yekān vā-pors «դերվիշների ունեցած վիճակի և դիրքի մասին մեկ – մեկ և մանրամասն աղքատիցս հարցրու»:

Տասներորդ ենթագլխում շարադրված է ձայնարկությունը խոսքի մասը: Շիրազի հին բարբառում ձայնարկությունները բաժանվում են երկու խմբի՝ բուն ձայնարկություններ և ձայնարկություններ, որոնք իրականում արտահայտված են այլ խոսքի մասերով, օրինակ, āx «վա՛յ, ա՛խ», owwah «ա՛խ ու վա՛խ»:

Առենախոսության **երկրորդ գլուխը՝** «Համադանի ֆահլավիյաթը», բաղկացած է տասնմեկ ենթագլուխներից:

Երկրորդ գլխի *առաջին ենթագլուխում* համապարփակ քննության է առնվել Համադանի հին խոսվածքի հնչյունաբանությունը՝ հենվելով Համադանի ֆահլավիյաթի վրա:

Երկրորդ ենթազվիտում ներկայացված է Համադանի հին բարբառի պատմական հնչյունաբանությունը: Մանրակրկիտ ուսումնասիրվել է ամբողջ հնչյունական համակարգի զարգացումը:

Երրորդ ենթազվիտում ներկայացված է Համադանի հին բարբառի գոյական խոսքի մասը: Առանձին քննության են առնվում.

ա) գոյականի թիվը

Համադանի ֆահլավիյաթների լեզվում գոյականը ունը եզակի և հոգնակի թիվ: Հոգնակի թիվը կազմվում է եզակի թվին ավելացնելով *-ān* և *-hā* վերջավորությունները, համապատասխանաբար շնչավոր և անշունչ առարկաների համար, օրինակ, *parišān sonbolān por tāv make xomārīn nargesān xunāv make* «Խառնված սմբուկները (մազերը) մի՛ գալարիր, մուգ նարգիզները (աչքերը) մի՛ արյունոտիր»:

բ) որոշյալության և անորոշության քերականական կարգը

Համադանի հին բարբառում գոյականի անորոշ առումը կազմվում է անորոշության *ī* հոդի միջոցով, օրինակ, *ru hamma ru varāyom gerd-e gēti šo dar āya va o sang-ē nehom sar* «ամբողջ օրը պատվեմ ամբողջ աշխարհով, երբ գա գիշերը գլուխս դնեմ մի քարի»:

Որոշյալ առման քերականական կարգն արտահայտվում է գոյականի հետ *ān* «այն» դերանունն օգտագործելու միջոցով, օրինակ, *man ān pīr-om ke xānand-om qalandar na xān-om bē, na mān-om bē, na langar* «ես այն ծերն եմ, որի անունը ճանապարհորդ դերվիշ է, ո՛չ տուն ունեմ, ո՛չ ունեցվածք, ո՛չ խարիսխ»:

գ) գոյականի շարահյուսական գործառույթները

Համադանի հին բարբառում գոյականը նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես.

ենթակա, օրինակ, *panj rōž-ē hani xorram gahān bē zamīn xandān barāmān āsamān bē* «հինգ օր է, ինչ աշխարհն ուրախ է, երկիրը ծիծաղում է, երկինքը՝ լացում»:

ստորոգյալ, օրինակ, *az ān espēda bāz-om hammadānī be tanhāyī karom na:čīrvānī* «ես Համադանի այն սպիտակ բազեն եմ, որ միայնակ եմ որս անում»:

ուղիղ խնդիր, գոյականն ուղիղ խնդրի պաշտոնում հանդես է գալիս հիմնականում *rā* ետադրության հետ, օրինակ, *besujom tā besujunom delat rā dar ātaš čub-e tar tanhā nasuje* «այրվեմ, որ սիրտդ էլ այրեմ, կրակի մեջ խոնավ փայտը մենակ չի այրվում»:

լրացում՝ ընդունելով տարբեր նախդիրներ, օրինակ, *až «-ից», ba «դեպի, կողմը», o «դեպի, կողմը», dar «մեջ», bar «կողմ»* և այլն, օրինակ, *zārej-om dī vedā-ye mōrej adxard morejān-e do dastaš o xodā dard* «կաքավ տեսա, որ ուսում էր մրջյունների կերը, այն մրջյունը երկու ձեռքը դեպի Աստված էր տարածել»:

կոչական, օրինակ, yā ke-m dor dī hani daryā nabī, yār yā ke-m xor dī gahān paydā nabī, yār «երբ որ տեսա մարգարիտը, գետը դեռ չկար, յա՛ր, երբ որ տեսա արևը, աշխարհն էլ չկար, յա՛ր»:

դ) գոյականի կազմությունը

Համադանի ֆահլավիյաթներում գոյականները ըստ կազմության կարող են լինել պարզ, օրինակ, pīr «ծեր», ածանցավոր, օրինակ, rāmešn «անդորր», և բարդ, օրինակ, Alvandkuh «Ալվանդ լեռ»:

Չորրորդ ենթագլխում մանրամասն քննության է առնվել Համադանի ֆահլավիյաթների դերանուն խոսքի մասը:

ա) անձնական դերանուններ

եզակի թիվ 1-ին դեմք man/az «ես», 2-րդ դեմք te «դու», 3-րդ դեմք u? «նա»

հոգնակի թիվ 1-ին դեմք mā/amā «մենք», 2-րդ դեմք ?, 3-րդ դեմք ānān «նրանք»

կցական-անձնական դերանուններ

եզակի թիվ 1-ին դեմք -om, 2-րդ դեմք -at, 3-րդ դեմք -aš

հոգնակի թիվ 1-ին դեմք -mun, 2-րդ դեմք ?, 3-րդ դեմք -šun

բ) ցուցական դերանուններ

Համադանի հին բարբառում ēn «սա, այս» ցուցական դերանունը արտահայտում է մոտ գտնվող առարկա, իսկ un «դա, այդ» դերանունը՝ հեռու գտնվող առարկա: Այդ դերանունների հոգնակի ձևերն են ēnān և ānān ձևերը, օրինակ, boro yāgfel mačar dar kuhsārūn har un yāfel čare yāfel xore tir «գնա, անհոգ մի՛ շրջիր սարերում, անհոգ շրջողին հանկարծակի է նետը դիպչում»:

գ) հարաբերական դերանուններ

Համադանի բարբառում տարածված է ke «որ» հարաբերական դերանունը, օրինակ, xorram ānān ke har zāmān te vinen saxun vā te karen vā te nešinen «երջանիկ են նրանք, ովքեր միշտ քեզ են տեսնում, քեզ հետ խոսում են, քեզ հետ նստում են»:

դ) անդրադարձ դերանուններ

xod ձևը միակ վկայված անդրադարձ դերանվանական ձևն է, օրինակ, ke mā xod āšeqān rā vā-šenāsim ke dim-e āšeqān rā rang nabu «որ մենք ինքներս նրա սիրեցյալներին կրկին ճանաչենք, քանի որ սիրեցյալների դեմքը գույն չունի»:

ե) հարցական դերանուններ

Համադանի ֆահլավիյաթներում մենք ունենք չուն «ինչպես» և kī «ո՛վ» հարցական դերանունները, օրինակ, be in bī āšiyānī bar kiyān šom be in bī xānemānī bar kiyān šom «այս թշվառությամբ ու՛մ մոտ գնամ, այս անտնությամբ ու՛մ մոտ գնամ»:

զ) անորոշ դերանուններ

Համադանի հին բարբառում հանդիպում են hama «բոլորը», kas «ինչ-որ մեկը, ոմն մեկը», har «ամեն, յուրաքանչյուր» անորոշ դերանունները, օրինակ, har un bāyī

ke dāraš sar be dar bī modāmaš bāybān xunīn jegar bī «ամեն այգի, որի ծառերի ճյուղերն ու տերևները պատից դուրս են կախվում, այգեպանը միշտ վշտով է լի»:

Հինգերորդ ենթազվիտում շարադրված է Համադանի հին ֆահլավիյաթների ածական խոսքի մասը:

Համադանի բարբառում ածականը չունի սեռի քերականական կարգ և որոշիչը հաջորդում է որոշյալին՝ կապվելով նրան իզաֆեթի միջոցով, օրինակ, agar češmun nevinan ruy-e zibā չե ծսո del ke xubun dar kojāye «եթե այքերը չտեսնեն գեղեցիկ դեմքը, սիրտն ի՞նչ իմանա, թե որտեղ են լավերը»:

Ածականի բաղդատական աստիճանը կազմվում է դրական աստիճանին ավելացնելով –tar վերջածանցը, օրինակ, tarāzu āvarīm ɣamhā besanjīm har ān sute tarīm sangīntar āyīm «կշե՛նք բերենք, վշտերը կշռենք, որոնք որ ավելի վառված են, ավելի ծանր են»: Գերադրական աստիճանը կազմվում է –tarīn վերջածանցի միջոցով, օրինակ, ez masartarin reīsā hasāb ā-bu «նրան ամենազվիսավորն են համարում»:

Վեցերորդ ենթազվիտում ներկայացված է Համադանի հին բարբառի բայ խոսքի մասը: Կառուցվածքային տեսանկյունից Շիրազի հին բարբառում առանձնացվում են.

ա) պարզ բայեր, օրինակ, mordan «մահանալ»,

բ) նախդրավոր բայեր, օրինակ, dāmān mō nēšānom dāman aš har do gēti hāvašānom «գնամ, Ալվանդի լանջին մազերս բաց թողնեմ, երկու աշխարհից էլ ձեռք քաշեմ»:

գ) բարդ բայեր, օրինակ, delom zār-o delom zār-o delom zār tabibom āvarid, dardom karid čār «սիրտս՝ տխուր, սիրտս՝ տխուր, սիրտս՝ տխուր, բժի՛շկ բերեք, ցավս բուժե՛ք»:

Ֆահլավիյաթներում բայերն ունեն ներկայի և անցյալի հիմք, որոնք ծագում են միջին իրանական ձևից, որն, հանգում է հին իրանական ձևին, օրինակ, šodan-šo «գնալ», bastan-band «կապել, փակել» (ներկայի հիմք), daštan- dard «ունենալ» (անցյալի հիմք):

Համադանի հին բարբառում կան հետևյալ բայական նախդիրները՝ vā- «կրկին, նորից», ad-, օ-«վրա», var – «վրա», dar – «մեջ, ներս», օրինակ, gar aš zar օ nehe divan-ē aš gel ba parčīn-aš karē vānōša-o vel «եթե կավե պատշգամբը ոսկով պատես, պատի վրա մանուշակ և ծաղի՛կ ցանիր»:

Համադանի ֆահլավիյաթներում վկայված են budan «լինել» բայի bī- և bu- ներկայի հիմքերով օժանդակ բայերը, օրինակ, be bādeš midahom naš mibarad bād bar ātaš mīnahom dušaš nemību «քամուն եմ տալիս նրան, քամին նրան չի տանում, կրակի վրա եմ դնում, չի ծխում» և ast «է» օժանդակ բայը, օրինակ, hame ālam por az garde če vājom čō mo del-hā por az darde če vājom «ամբողջ աշխարհը լի է փոշով, ի՞նչ ասեմ, իմ սիրտն էլ, ուրիշ սրտերի պես, լի է վշտով, ի՞նչ ասեմ»:

Համադանի հին բարբառում վկայված են բայի հետևյալ ժամանակաձևերը.

Ներկա-սպառնի ժամանակաձևը, որը կազմվում է *mī-* նախամասնիկով, բայի ներկայի հիմքով և դիմային վերջավորություններով, օրինակ, *na tow dirom na jāyom mīkaru dard hamī ḏunom ke nāḷunom šow o ruz* «ոչ ջերմություն ունեմ, ոչ էլ որևէ տեղս է ցավում»:

Ներկա-սպառնի ժամանակաձևը, օրինակ, *toxm az dast dā vā xāk idāb tarsom avri var in sahrā navārī* «սերմը ձեռքիցս զցեցի և գետնին ցանեցի, վախենում եմ, որ անձրև չի տեղա այս դաշտի վրա»:

Ներկա-շարունակական ժամանակաձևը, օրինակ, *monādī mī-karom šahro bešahru vafā-ye gol'ozārun hafte-yī bī* «Քաղաքից քաղաք կգոռամ, որ գեղեցկադեմի հավատարմությունը մի շաբաթից երկար չի տևում»:

Պայմանական եղանակի ներկա-սպառնի ժամանակաձևը, *աորիսպը*, որը կազմվում է *be-* նախամասնիկով, բայի ներկայի հիմքով և դիմային վերջավորություններով, օրինակ, *boro yāgfel mačar dar kuhsārun har un yāfel čare yāfel xore tīr* «զնա՛, սարերում անուշադիր մի՛ պտսվիր, անուշադիր պտսվողին նետը հանկարծակի է դիպչում»:

Ըղծական ժամանակաձևը, օրինակ, *ze del naqš-e jamālet dar naši-yā xiyāl-e xat o xālet dar naši-ya* «վեհ պատկերդ սրտից ներս չմտնի, պատկերիդ միտքը ներս չմտնի»:

Ապառնի ժամանակաձևը, օրինակ, *geribānom ze dastes čāk čāku naxāhom duxt tā qiyāmat* «օձիքս քո ձեռքով պատռվել է, չեմ կարելու մինչև Ահեղ դատաստանի օրը»:

Անորոշ ժամանակաձևը, օրինակ, *garam pāyī na bī kaāyem te vīnem bešom ānun bevinom ke te vīnen* «երթև ուղք չունենամ, որ գամ, քեզ տեսնեմ, կզնամ, նրանց կտեսնեմ, որ քեզ տեսել են»:

Անցյալ կատարյալ ժամանակաձևը, որը կազմվում է բայի անցյալի հիմքով , դիմային վերջավորություններով, օրինակ, *jorm-om ēn-a ke az te dōst dārom na xōn-om kard-o na-m rāh-e žad, ay yār* «հանցանքս այն է, որ քեզ եմ սիրում, ոչ արյուն եմ թափել, ոչ շեղվել եմ ճանապարհից»:

Անցյալ անկատար ժամանակաձևը, որը կազմվում է *mī-* նախամասնիկով, բայի անցյալի հիմքով և դիմային վերջավորություններով, օրինակ, *šāhī ke be hokm duš kermān mixord emruz hamīn xorand kermān u rā* «շահը, որը հրամանով երեկ Քերմանն էր ուտում, այսօր նրան որդերն են ուտում»:

Վաղակատար ներկա ժամանակաձևը, որը կազմվում է բայի անցյալի դերբայով և դիմային վերջավորություններով, օրինակ, *ze možgān-e xadangat xorde-om tīr ke nāsuresē be har dam tāze-tar bī* «սուր թարթիչներիցդ վիրավորվել եմ, որ վերքը ամեն պահ ավելի է թարմանում»:

Հրամայական եղանակի եզակի թվի երկրորդ դեմքը կազմվում է բայի ներկայի հիմքից՝ առանց դիմային վերջավորության, իսկ հոգնակի թվի երկրորդ դեմքը՝ -*id*

դիմային վերջավորությամբ: Կարող է ունենալ նաև be- նախամասնիկ, օրինակ, berow niġi kar o har yā ke te bi hark ke niġi kare ham nāmešī pey «զնա՛, լավ գո՛րծ արա ամեն տեղ, ուր կաս, ով լավ գործ է անում, նրանից անուն է մնում»:

Պատճառական բայերը կազմվում են անցողական բայերի ներկայի հիմքին ավելացնելով –ān- մասնիկ, օրինակ, besujom tā besujunom delat rā dar ātaš čub-e tar tanhā nasuje «այրվեմ, որ այրեմ սիրտդ, կրակի մեջ միայն թաց փայտը չի վառվում»:

Վկայված են հետևյալ դերբայները.

անորոշ դերբայը, որը կազմվում է բայի անցյալի հիմքին –an ավելացնելով, օրինակ, vaqt-e mordan be yāsīn-om če hājat se čār-om pahlavī ō sar be-xānand «մեռնելու ժամանակ ինչիս է պետք Յասինը, երեք-չորս ֆահլավի՛ թող կարդան գլխավերևիս»:

անցյալի դերբայը, որը կազմվում է բայի անցյալի հիմքին ավելացնելով –e, օրինակ, parišān čun karī un tār-e zolfun be har tāri deli āvīte dīri «ինչու՛ ես խճճում մազերիդ այդ խոպոպը, ամեն մի խոպոպից մի սիրտ կա (ուներ) կախված»:

ապառնի դերբայը, որը կազմվում է անորոշ դերբային ավելացնելով –ī, օրինակ, be kas dar del-e mo vātani na ke sang az āsemān andātani na «իմ սրտում ոչ մեկին ասելիք չկա, ինչպես երկնքից ընկնող քար չկա»:

Յոթերորդ ենթագլխում շարադրված է Համադանի բարբառի մակբայ խոսքի մասը: Առանձնացվել են ժամանակի, չափ ու քանակի, տեղի, ձևի մի շարք մակբայներ, օրինակ, šow o ruz «գիշեր ու ցերեկ», hargez «երբեք», dā'em «մշտապես», damādam «անընդհատ», yek dam «մի պահ», sahar «վաղ առավոտ», īru «մի օր», bāmdādān «արշալույսին», nagahān «հանկարծ», ze bas «շատ, բավականին» և այլն:

Ութերորդ ենթագլխում ներկայացված է կապ խոսքի մասը, որտեղ որպես կապական բառեր հանդես են գալիս նախդիրները, օրինակ, aẓ, tā, dar, gerd, agar, o(ō), bar և այլն: Օրինակ, ham az dar berānan su te āyom te gar az dar berāni bar kiyān šom «երբ ինձ վտարում են, քեզ մոտ եմ գալիս, ե թե դու էլ ինձ վտարես, ու՛մ մոտ գնամ»:

Իններորդ գլխում ներկայացված է Համադանի հին բարբառի շղկապ խոսքի մասը: Առանձնացրել ենք հետևյալ շղկապները՝ va, o, tā, yā, ke, če, ar (agar), օրինակ, baša na: čīrvān dast-at vočādast če en-at vadkara aẓ kār badard «որսո՛րդ, ձեռքդ թող չցավի (կեցցե՛ս), որ այս մեղսավորին սպանեցիր»:

Տասներորդ գլխում տեղ է գտել Համադանի ֆահլավիաթների թվական խոսքի մասը: Քանակական թվականներից վկայված են yak «մեկ», do «երկու», se «երեք», čār «չորս», panj «հինգ», šaš «վեց», haft «յոթ», hašt «ութ», no(h) «ինը», dah «տաս», sad «հարյուր», he(a)zār «հազար» թվականները: Թվականը այս բարբառում հիմնականում ունի նախադաս դիրք, օրինակ, panj rōž-ē hanī xorram gahān bē zamīn

xandān barāmān āsamān bē «դեռ հինգ օր աշխարհը երջանիկ է, գետինը ծիծաղում, երկինքը արտասվում է»:

Տասնմեկերորդ գլխում ներկայացված է Համադանի հին բարբառի ծայնարկություն խոսքի մասը, որը բաժանվում է երկու խմբի՝ բուն ծայնարկություններ և որպես ծայնարկություն հանդես եկող ածականներ և գոյականներ, օրինակ, moyeys! arkāde īn sahrā naketi ve īn sahrāye por pahnā neketi «ո՛վ փրկիչ, այս դաշտը չընկնե՛ս, այս լայն դաշտը չընկնե՛ս», xošā, ānān ke dā'em dar namāzan behešt-e jāvedān bāzārešun bī «երջանի՛կ են նրանք, ովքեր միշտ աղոթում են, դրախտը հավերժ նրանց շուկան է»:

Ատենախոսությունն ավարտվում է հետազոտության արդյունքներն ընդհանրացնող եզրակացություններով:

1) Շիրագի խոսվածքի կապը հին խոսվածքի հետ արտահայտվում է հնչյունական և բառապաշարային համակարգերում, օրինակ, θal «տարի», θar «գլուխ», θoxi «բառ», θ հնչյունը, որը հանգում է հին իրանական tc հնչյունախմբին և հնդեվրոպական k-ին:

2) Շիրագի հին խոսվածքի մի քանի բառեր պահպանվել են որոշ խոսվածքներում: Օրինակ՝ morv «թռչուն» բառը, որը ներկայումս կիրառական չէ խոսակցական և նորմատիվ պարսկերենում, սակայն պահպանվել է Դուսիրանի (morb), Քալանի (morb), Աբդուի (morb), Էնվազի (morv) խոսվածքներում՝ «թռչուն» իմաստով: Այդպիսի բառերից է men «ներս, մեջ» բառը «Kān-ī Malāhat» -ում, որը հանդիպում է նույն իմաստով Քազերունի և Խուզիստանի խոսվածքներում՝ mene ձևով: Կարող ենք հիշատակել Շիրագի հին խոսվածքում երբեմն գոյություն ունեցած մի շարք այլ բառեր ևս, որոնք ներկայումս գործածվում են Ֆարսի, Խուզիստանի և նույնիսկ Բուշեհրի բազմաթիվ խոսվածքներում, ինչպես, օրինակ՝ heštan «թողնել, թողլ տալ», ars «արցունք», tahl «դառը», hen «կա», hend «կան», duš «երեկ գիշեր» և այլն:

3) Շիրագի հին խոսվածքը կորցրել է որոշ քերականական կառույցներ: Այսօր Շիրագի խոսվածքում չի գործածվում երգատիվ կառույցը, չնայած այն պահպանվել է որոշ խոսվածքներում, ինչպես Դորուդգան-է Մարվդաշտ բախշի Քանդազ գյուղի խոսվածքում:

4) Համադանի խոսվածքով պահպանված գրավոր հուշարձանները ըստ ծավալի և բովանդակության միանգամայն տարբերվում են Շիրագի հին խոսվածքի վերաբերյալ պահպանված աղբյուրներից: Ժամանակի ընթացքում պարբերաբար արտագրությունների հետևանքով Համադանի խոսվածքի վերաբերյալ գրավոր հուշարձանները զգալի փոփոխվել են:

5) Այս խոսվածքում առկա են մի շարք տարրեր ևս, որոնք չեն նկատվում պարսկերենում և պահլավերենում: Օրինակ՝ eč շաղկապը, որը փոխառված է պարթևերենի ճե ձևից: Այս խոսվածքում միառժամանակ պահպանվել է

Արշակունիների շրջանի պահլավերենի աորիստի ձևը, որը կարելի է հանդիպել Բաբա Թահերի ժողովածուի մեջ: Այսպիսի զարգացումը խոսում է Համադանի խոսվածքի՝ հյուսիս-արևմտյան իրանական լեզուների ճյուղին պատկանելու մասին: Հնարավոր է դրա կապը միջին դարերի մարական լեզվի հետ:

6) Պատմական զարգացման տեսանկյունից Համադանի խոսվածքը զգալի նմանություններ ունի Շիրազի խոսվածքի հետ: Որպես օրինակ հարկ է նշել bura «արի՛» բառը, որը շարունակում է կիրառվել Համադանի ժամանակակից խոսվածքում՝ պահպանվելով այլ (Աբիանեի: bura, Ամրեի: bure, Ալվիրի: bura) խոսվածքներում ևս՝ նույն «արի՛» իմաստով:

7) Այս երկու խոսվածքների քննությունը ցույց է տալիս, որ դրանց արմատները հասնում են մինչև նախաիսլամական ժամանակաշրջանը: Շիրազի հին խոսվածքը շարունակողն է եղել պահլավերենի ավանդույթների, որն էլ հին պարսկերենի ժառանգն է: Այն ընդհանրություններ ունի լուրական տարբեր խոսվածքների և բարբառների հետ, որոնցից է հին իրանական միջձայնավորային չ հնչյունի միանման զարգացումը և որոշ ընդհանուր բառեր, ինչպիսիք են men «մեռ», tey «կողքին»:

8) Ֆարսի և Համադանի բարբառային հին տեսքերը համեմատելիս նկատում ենք, որ միայն նրանց ընդհանուր բառերն են կիրառական ժամանակակից պարսկերենում: Ըստ ամենայնի, ժամանակին եղել է լեզուն բարբառային տարրերից մաքրելու միտում, որը հանգեցրել է պարսկերենի բառապաշարային համակարգի տկարությանը: Պարսկերեն բնիկ բառերի վերացումը և անհետացումը կապվում են արաբերենից կատարվող մեծածավալ փոխառությունների հետ: Բացի այդ միտում է եղել կիրառել պարսկերենի ճանաչված ու հայտնի բառերը և խուսափել բարբառային, նվազ ծանոթ բառերի օգտագործումից: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել պարսկերենի բառապաշարի պատմական զարգացման քննության ժամանակ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Սաջջադի Շ., Համադանի հին լեզուն, «*Իրան Նամե*», Երևան, 2015, հատոր 46, էջ 67-73:

2. Սաջջադի Շ., Համադանի հին բարբառի որոշ բառերի ուսումնասիրությունը, «*Կանթեղ*», Երևան, 2015, հատոր 3(64), էջ 48-56:

3. Саджади Ш., Историческая фонетика диалекта Шираза, “*Иран-Наме*”, Алма-Ата, 2015, Том 1-2 (33-34), стр. 157-177:

4. Սաջջադի Շ., Համադանի հին բարբառի շարահյուսությունը, «*Կանթեղ*», Երևան, 2016, հատոր 4(68), էջ 81-94:

5. Саджади Ш., Синтаксис древнего диалекта Шираза, *“Иран-Наме”*, Алма-Ата, 2015, том 3-4 (35-36), стр. 320-335.
6. Саджади Ш., Словообразование в древнем диалекте Шираза, *“Иран-Наме”*, Алма-Ата, 2016, том 1-2 (37-38), стр. 357-372.
7. Sajjādi Sh., Barresi-ye rišešenāxti-ye vāzehāyi az guyeš-e kohan-e širāzi, *“Irānšenāsi”*, Gilān, 2017, šomare-ye 1, ss. 13-27.

СЕЙЕДЕ ШОХРЕ САДЖАДИ

ФАХЛАВИЯТ ФАРСА И ХАМАДАНА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 «Общее и Сравнительное Языкознание»

Защита состоится 19 февраля 2018 г. в 15.00 часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича)

РЕЗЮМЕ

Термин *fahlaviyāt* мн. ч. от арабского слова *fahlaviya*, происходит от *pahlavī*, среднеперсидского *pahlavīg*, используется для характеристики стихотворных отрывков, созданных в регионе Пахле (*Pahlē*). Регион Пахле по разным данным включает территории Хамадана, Исфахана, Рея, Нахаванда, Атурпатакана, Динвара, Мехрджана, Казвина и т.д. Тема диссертации фахлавиаты Хамадана и провинции Фарс.

Основная цель данной работы - синхронное и историческое изучение языка фахлавиатов.

На основе проведенного исследования приходим к выводу, что несмотря на то, что говоры Хамадана и Ширази претерпели изменения, они сохранили значительное количество архаичных элементов, с помощью которых можно восстановить различные диалектные формы.

Ранние фахлавиаты этих регионов не подвергались научному исследованию и анализу, и данная работа представляет собой первую попытку обобщающего анализа в области иранской диалектологии и, в частности, сравнительной лингвистики.

В работе использован метод сравнительного лингвистического исследования.

«Введение» состоит из двух частей. Первая часть включает историю фахлавиата, его происхождение, информацию о районе Пахле, объяснения различных терминов относящихся к фахлавиату, проблемы арабской метрики. Во второй части содержится история научных исследований фахлавиатов, ссылки на статьи и работы Хенинга, Адиба Туси, Молаи, Данеша Пажуха, Дабире Сийаги, Эгтедари, Мухаммада Джафар Ваджеди, и т.д.

Первая глава - «Местная поэзия Фарса», включает комплексное исследование стихов провинции Фарс. С этой точки зрения, особенно важны стихи Шах Дайи

Ширази из сборника «Kān-e malāḥat», стихи Бесхака Атеми, стихи на Казерунском диалекте, книга Али ибн ал Хасана Ансари «Extīārāt-e badī'ī», диван Шамса Пос Насера, книга Mosalasāt-e S'aadī, сборники «Toḥfe-e hakīm» и «Neyrīziyāt» и т.д.

Первая глава состоит из десяти подглав, которые посвящены синхронному и диахронному анализу морфологии и фонетики.

По такому же принципу разделена и вторая глава - «Фахлавиат Хамадана».

Имя существительное в фахлавиатах Хамадана и Шираза имеет следующие грамматические категории: число, определенность и неопределенность.

Различаются личные, агглютинативные, указательные, относительные, отрицательные, вопросительные, неопределенные и определенные местоимения.

В фахлавиатах Хамадана прилагательное имеет трехступенную систему сравнения и, как правило, ставится после определения, образуя изафетную структуру. Сравнительная степень прилагательных образуется путем добавления суффикса *-taḡ* над положительной формой, а превосходная степень образуется с суффиксом *-taḡīn*. Однако в фахлавиатах Шираза не находим прилагательных сравнительной степени.

Обе формы диалектов различают наречия и адвербиальные слова.

Глагол имеет следующие грамматические категории: род, наклонение, залог, время, лицо, число. Структура глаголов может быть простой, сложной и производной. Для образования временных форм глагола используются основы настоящего и прошедшего времени.

В вышеупомянутых диалектах союзы *ke* «что», *uā* «или», *valī* «однако, но», *šo* «как», *o* «и» и т.д. образуют предложения.

В разряде числительных различают количественные, порядковые и собирательные.

В качестве междометий выступают изобразительные слова, в которых звучание частично предопределено значением слова и определенными выражениями.

В «Заключении» диссертации подводятся главные итоги работы.

SEYEDE SHOHRE SAJJADI

FAHLAVIAT OF FARS AND HAMADAN

Thesis for PhD degree in Philology, speciality 10.02.02,
“General and Comparative Linguistics”.

The defense will be held on 19 February, 2018 at 15.00, at the session of Specialized Council on Linguistics of 019 HAC in the Institute of Language after Hr. Acharian NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

The word *Fahlavīyāt* is the arabicized plural form of the Middle Persian *pahlavīg* and is used for characterization of poems, created in the region of *Pahle* (*Pahlē*). This region, according to various sources, included Hamadan, Isfahan, Ray, Nahavand, Atrpatakan, Dinvar, Mehrjan, Kazak, Masebzan, Qazvin, etc. This dissertation is mainly based on the study of the *fahlaviats* of Hamadan and Fars.

The main purpose of this work is the synchronic and diachronic study of the grammatical forms of *fahlaviats* and the research conducted in the frameworks of studying the same forms. On the basis of studies we conclude: in spite of the fact that the dialects of Hamadan and Shiraz have endured some significant changes and totally transform their image, thus they contain numerous archaic materials, which allows to reconstruct different dialectical forms.

Early *fahlaviats* of these regions were not exposed to scientific research and analysis, and it is the first time that the work attempts to generalize and analyse this part of Iranian dialectology, and comparative linguistics.

The basic method of study is comparative linguistics research method.

"Introduction" consists of two parts: first part includes the history of *fahlaviat*, its origin, the information about the borders of the *Pahle* region, the explanation of different terms related to *fahlaviat*, the problems of Arabic metrics. The second part represents the history of studies of *fahlaviats*, appealing to the articles and researches of Hening, Adib Tousi, Molai, Danesh Pajuh, Dabire Siaghi, Eghtedari, Mohammad Jafar Wajedi, and etc.

The first chapter, entitled "Local poetics of Fars", includes complex study of poems of the Fars region, which although do not appear as a part of this genre since they exist beyond the boundaries of *Pahle* region, but are considered as valuable monuments of

ancient Iranian dialects. From this point of view it is important to employ, the poems in the book of Shah Dayi Shirazi «Kān-e malāhat», divan of Shams Pos Naser, poems and expressions written in Qazerunian dialect, the book Mosalasāt-e S'aadi, poems of Besak Atemi, book of Ali ibn al Hasan Ansari «Extiārāt-e badī'i», works «Tohfe-e hakīm» and «Neyriziyāt».

First chapter is divided into ten subchapters, where are shown synchronic and diachronic analysis of morphology and phonology, including historical phonetics, noun, pronoun, adjective, adverb, verb, conjunction, numeral and interjection.

The same principle is used in the second chapter entitled "Fahlaviat of Hamadan".

In the dialect of Hamadan and Shiraz the noun has grammatical categories of number, definite and indefinite article.

Personal, agglutinative, demonstrative, relative, negative, interrogative, definite and indefinite pronouns are differentiated in the dialects mentioned above.

The adjectives in the studying dialects have three degrees of comparison. The comparative degree of adjectives in Hamadan dialect is formed by adding the suffix *-tar* to positive degree and the suffix *-tarīn* to superlative degree. In fahlaviats of Hamadan, we do not find the adjectives of comparative forms.

Both forms of dialects distinguish adverbs and adverbial forms.

The verb in these dialects can be transitive and intransitive and has the following grammatical categories: gender, aspect, time, person, number. Verbs can have simple, complex and derivative structure. The present and past stems of verbs are used for the formation of the aspectual and time distinctions of the verb.

In the fahlaviats of Hamadan and Shiraz there have been some series of conjunctions, such as *ke* "that", *yā* «or», *valī* «but», *čo* «as», *o* «and» and etc.

There are cardinal, ordinal and collective numerals in these dialects.

Interjections include exclamations and onomatopoeia.

The grammatical material abounds with illustrative examples.

In the final part of the dissertation are summarized the main conclusions of the work.